Հովհաննես Թումանյան

Հսկան

(Կովկասյան առասպել)

Լավ չեմ հիշում, թե որ դարում,
Հին ժամանակ, մեր աշխարհում
Ասում են թե՝ կար մի իշխան.
Մի մեծ իշխան, էնքան ուժեղ,

Որ թե մարդիկ նրրա աչքում,
Թե՛ հասարակ ճանճ ու մրժեղ:
Ինչ որ աներ ու կամենար,
Օրենք էր էն երկրի համար.
Ո՞վ էր գլլխից ձեռ վեր կալած,

Ո՞վ դուրս կրգար նրրա դիմաց:
Ուներ անթիվ ու անքանակ
Ոչխարի հոտ, մարդի բանակ,
Կովի նախիր, խոզի բոլուկ,
Երամակներ ձիու, ջորու,

Էս բոլորը ցրրված, փրռված
Մինչև ծովի ափը հեռու:
Մինչև ուր որ քրշեր, տաներ,
Իր աշխարհքի սահմանն էն էր.

Ո՞վ էր գըլխից ձեռ վեր կալած,

Ո՞վ դուրս կըգար նըրա դիմաց:
Մի անգամ էլ էս իշխանը
Երբ նըստած էր իրեն տանը,
Լեղապատառ ներս ընկավ տուն
Իր հոտերի վերակացուն.

Ապրած կենաս, մեր տեր իշխան,
Հապա՛, էսպես հրաշք մի բան.
Արածում էր ծովի ափին
Բազմությունը քո հոտերի,
Մին էլ տեսնենք՝ ծովի միջին

Մի վիթխարի մարդ է գալի:
Մի վիթխարի մարդ եմ ասում,
Որ մենք իր մոտ լու ենք չընչին,
Ծովը մինչև ծունկն է հասնում,
Իսկ գըլուխը ամպի միջին:

Եկավ, կանգնեց մեր հանդիման
Ու որոտաց ամպի նըման.
«Ո՞վ է, ասավ, էսպես բերում
Թողնում ապրանքն իմ հանդերում.
Կորե՛ք իսկույն, դուք մարդուկներ,

Ձեռըս քանի չի հասել դեռ…»
Էն ժամանակ վեր կացա ես
Ու պատասխան տըվի էսպես.
«Էդ սևակնած, մութ ամպերում
Ջուր ես էդքան բարձըր գոռում.

Ով էլ լինես, ուսկից էլ գաս,
Էս մի բանը լավ իմանաս,

Դու, երկնահաս, ահեղ հրսկա,
Մեծ իշխանի ապրանքն է սա,
Ո՞վ է գրլխից ձեռ վեր կալած,

Ո՞վ դուրս կրգա նրրա դիմաց»:
Բայց ինձ իսկի չրլսեց էլ
Էն անճոռնի աժդահակը,
Էն ամպերից ցած կրռացավ,
Ձեռը կոխեց ծովի տակը,

Դուրս հանեց մի ձուկն ահագին
Ու դեմ արավ արեգակին,
Որ խորովի...» Հազիվ էսքան
Պատմեց հովիվն իշխանական
Ու վեր ընկավ, շունչը փչեց:

Խիստ զայրացավ իշխանը մեծ.
Ո՞վ է, ասավ, համարձակվել
Իմ տերության սահմանն եկել
Ու էդպես էլ վրրես հաչում…
Ինձնից ուժեղ չեմ ճանաչում

Ես ոչ մի տեղ և ոչ մեկին…
Էսպես ասավ ու զայրագին
Հրրամայեց՝ զորքերը գան:
Հրրամայեց՝ զորքերն եկան.
Կեցցե՛ մեր տեր, մեր թագավոր,

Անհաղթ, անմահ, ամենազոր…
Ապրե՛ք, ասավ իշխանը սեգ,
Ելեք իսկույն ու գրնացեք,
Մանուկ ու ծեր
Իմ առյուծներ,

Ո՞վ է, տեսեք, վրրես հաչում
Ու իմ ուժը չի ճանաչում:
Ցույց տրվեք դուք, որ ոչ մի տեղ
Չըկա ոչ ոք ինձնից ուժեղ…
Ասավ՝ զորքերն իրենց կարգին

Փող փըչեցին, թըմբուկ զարկին,
Շըրըխկոցով, զըրընգոցով
Ճամփա ընկան դեպի մեծ ծով:

Հասան, տեսան ա՛յ քեզ հըսկա,
Գըլուխն էստեղ, ոտներ չըկա.

Գընա՛, գընա՛, թե որ գըտնես…
Երկար ու մին ձըգված էսպես,
Հըսկայական քընով քընած:
Էստեղ, էնտեղ դիրքեր բռնած՝
Դես չոքեցին, դեն պառկեցին,

Հա զարկեցին ու զարկեցին,
Տեսան տեղից ժաժ չի գալի,
Խըռըմփում է զարհուրելի,
Խըռըմփոցից, ինչ-որ խոսում,
Մարդիկ իրար ձեն չեն լըսում:

Մոտ գընացին, էլի՛, էլի՛…
Դարձյալ տեղից ժաժ չի գալի:
Կամաց-կամաց սիրտ առնելով,
Գոռգոռալով, հարայ տալով,
Դուրս թափվեցին թաքուստներից,

Ելան վրրեն, դեսից, դենից,
Որը ոտին,
Որը քրթին,

Որը լանջին,
Որն ականջին,

Փորի վրրա, միրքի միջում,
Ձի են քրշում, նիզակ ճոճում,
Ջարկում, զարկում,
Ձրգում, թրքում,
Հայհոյում են էսպես, էնպես…

Մին էլ հրսկան էն սարի պես
Վրրա նստեց մե՛ծ, ահարկու.
Ինչ պատահեց ոչ տեսնես դու:
Հազարներով մարդն ու իր ձին
Տակովն եղան, կոտորվեցին.

Որն էլ գրլխից, քրթից, լանջից,
Կամ ուսերից, կամ ականջից
Ներքև ընկավ՝ թե մարդ, թե ձի,
Ներրա օրն էլ դու իմացի:
Շատ զարմացավ հրրեշ հրսկան,

Թե, տեր աստված, արդյոք էսքան
Մանրը-մունրը ինչ բաներ են,
Որ եկել են թափվել վրրեն:
Տեսավ, ինչ որ կենդանի կան՝
Վազ են տալի, թե ետ գրնան.

Բուռն արավ իր բրոնովը մեծ,
Իրար խառնեց, ողջ հավաքեց
Գրրպանն ածավ
Ու վեր կացավ,
Լրնգլրնգալեն իրիկունը

Գընաց հասավ իրենց տունը:
Տանը իր պես մեծ, ահագին
Մի մեր ուներ, բարի մի կին:
Գընաց հրսկա մորը պատմեց
Թե իրեն հետ ինչ պատահեց,

Ու գըրպանից հանեց բոլոր՝
Ահից խելառ ձին-ձիավոր:
Բարի կինը հենց որ տեսավ,
Ամա՛ն, որդի, վա՛յ ինձ, ասավ.
Ի՞նչ ես անում էդ խեղճերին,

Բա չե՞ս տեսնում, թե քո ձեռին
Ոնց են դողում: Ասենք մեծ ես,
Մի՞թե պիտի փոքրին տանջես:
Մեծ թե փոքրը, ինչ էլ լինի,
Ամեն ապրող շունչ կենդանի,

Որ ծընվել է արևի տակ,
Էս աշխարհքում միատեսակ,
Մինը պակաս, մյուսը ավել,
Ողջ էլ գիտեն խընդալ, ցավել,
Չըպարծենա երբեք ոչ ոք,

Թե ինքն անհաղթ մի բան է ջոկ.
Միշտ ուժեղից ուժեղը կա,
Իսկ ամենից ուժեղը՝ մահ…
Բա՛ց թող, որդիս,
Բա՛ց թող՝ գընան,

Ապրեն ազատ
Ուր կամենան:

Ու, հընազանդ մոր խընրատին,

Իսկույն հանեց հրսկա որդին
Իր գրրպանից ձին-ձիավոր,

Իրար խառնած զորքը բոլոր,
Թողեց գընան՝
Ուր կամենան:

1908